

20Բ. ԱՆԴՐԱՆԿ ԿԸ ԽՕՄԻ

(4)

Ա. ՏԱՐԻ — ԹԻԻ 20

ԳԻՆ՝ 75 ՍԱՆԹԻՄ

ԲԱՐԻՉ. ՇԱՐԱԹ 30 ԱՊՐԻԼ, 1921

ԲԱԺԱՆՈՐՉԱԳՐՈՒԹՅՈՒՆ		
Երկուս 40 Ձր. Տրկն. 25 Կցն.		
Ամբիկս 5 Տոլար = 3		
Փուրթիս 400 Դր. = 250		
Եզրկոսս 100 = = 60		

ԱՊԱԳԱՅ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅ ՌԱՄԿ. ԿՈՌԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՐԵՎՏ. ԵՐԲՈՊԱՅԻ ՇՐՋԱՆԸ

Խմբագրութեան եւ վարչութեան գրասենեակը
նստակ. գրութիւն եւայլն զրկել
Պ. ՅՈՂԷ. ՊՕՂՈՍԵԱՆԻ
30, Rue de Paradis — Paris (X^e)

“ ABAKA ” (l'Avenir) journal arménien hebdomadaire

ԲԱՐՍԵՆՍԻ ԳՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՀՍՍՍՐԱԿԱԿԱՆ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

Այս միջոցին զօր. կօրկանեան կը գտնուէր կարս: Պաթում Վէհիպ բաշայի մօտ էին Բաջազնունի. Սա. տիսեան եւ Պապաջանեան, նաեւ Օհանջանեան եւ սօցիալ դեմոկրատներէն Զօհրապեան եւ Բէկզատեան: Հաշտութեան պայմանագրութիւնը կը զրկուի ինձ թուրք սպաներու ձեռքով նախ կարսէն զօր. կօրկանեանէն. երկրորդ՝ Գարաքիլիսէն Վէհիպ բաշայի հրամանը. երրորդ թիֆլիսի Ազգ. Խորհուրդէն Ազատաֆայի ճամբով: Ասօնք կար դալէ վերջ կ'ուղարկեմ Երեւան՝ զօր. Նազարբէկեանի:

Պ. Պապաջանեան ինձ պատմած է թէ՛ հաշտութիւնը ստորագրուած է Նազարբէկեանի կողմէ թիֆլիս զրկուած այն հեռագրին վրայ, որով Զօրափարը կ'ըսէր թէ ոչ մէկ կառուող զինուոր չունի:

Հաշտութեան պայմանագիրը կարդալէս ետք Տիլիջանէն հեռագրեցի Նազարբէկեանի հետեւեալը.

«Վեց հարիւր տարուան ստրկութեան շղթան դարձեալ ձեր վիզն ու ոտքը կ'անցընէք ձեր ձեռքով: Չեմ կրնար այս պայմաններուն հանդուրձել. մոռնալով ձեր երեսուն տարուան զոհերը եւ մէկ միլիոն նահատակները: Ստացէ՛ք ինձմէ Տիլիճանը, որպէսզի ես մեկնիմ ուր որ կ'ուզեմ:»

Այս հեռագրիս պատճենները կալին Ս. Կաթողիկոսին եւ Երեւանի Ազգ. Խորհուրդին մօտ:

Ղրկուեցաւ դնդ. Պաղտասարեան, որ Տիլիճանը ստացաւ ինձմէ: Տիլիճանը եօթը օր պահելէս վերջ մեկնեցայ Սեւանայ լճին հիւսիսակողմը գտնուող Էլէնօֆքա գիւղը:

Հոն կազմ ու պատրաստ կեցող զօրամասիս բոլոր զալիք ղժուարութիւնները եւ բազմակողմանի զոհողութիւնները բացատրեցի: Չինուորները մէկ հողի եւ մէկ բերան պատասխանեցին ինձ.

«Մենք պիտի կռուինք մինչեւ մեր արեան վերջին կաթիլը, մեր նպատակին հասնելու համար:»

Միայն զրազիրս սպայ Շիմշիր-
եան ըսաւ թէ իր բնտանեկան պա-
րագաները թոյլ չեն տար այլեւս ինձ
հետ գալու: Ուրախութեամբ տուի
անոր իրաւունքը եւ ճամբեցի:

Այս պարօնը 920 ի մայիսին Ա.
լէքսանդրապօլի պօլշեւիքեան շար-
ժումներուն ժամանակ ձերբակալ-
ուած եւ իր ատրճանակը վրան
ըլլալով՝ բանտարկուած է եւ իբր
թէ բանտին մէջ անձնասպան եղած
է. ինչպէս իմացայ ուրիշներէ:

Իմ հակառակորդներս շատ լաւ
գիտեն նախիջեան. Զուլֆա եւ Աոյ
երթալուս պատճառները: Չախողու-
թիւն թէ յաջողութիւն ունեցայ,
ասոր ալ կը վկայեն ոչ միայն այսօր
Պաքուպ գտնուող յիսուն հազար
ասորի եւ քսան հազար չայ գաղ-
թական ժողովուրդը, այլ պարսիկ-
ները եւ նոյն ինքն թշնամիս Ալի
Իսան բաշա: Զանգեզուրի, Ղափա-
նի, Սիսիանի ժողովուրդը, մինչեւ
10 տարու մանուկները գիտեն թէ
իմ զօրամասս օգուտ ունեցաւ թէ
վնաս:

Երբ Զանգեզու-ը կը գտնուէի դեռ,
ստացայ Պ. Խատիսեանէն նամակ
մը: Պատասխանելով՝ ըսի թէ իմ
դժգոհութիւնս զաշնակցական չ է ֆ-
երէն է. թէ՛ «չայաստան» թերթի մէջ
հրատարականս հրատարակուելէ
վերջ թիֆլիսի բաւօնական ժողո-
վը ոչ իսկ ազնութիւնը ունեցաւ
զիս հրաւիրելով դժգոհութիւններս
լսելու. որովհետեւ ճիշտ այդ բայօ
նական ժողովը կազմողներն էին, որ
կը հալածէին զիս. բացառութիւն-
ները յարգելի են:

(Շարունակելի) ԱՆԴՐԱՆԻԿ

Le 26.08.2017

WAN

©Western Armenia News